ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի

Ղեկավար Գ. Ներսիսյան

2019 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան կատարած աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ղուկասյանի, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի, Ոսկեհատի միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցների, մասնագետների և համայնքի բնակիչների մասնակցությամբ.

05.02.2020թ.

1. Ոսկեհատ համայնքի բյուջեն կատարվել է 103,1-%-ով

   ա) Հողի հարկ -100,3 %-ով

   բ) Գույքահարկ -101,5 %-ով

   գ) Վարձակալական հ/հ -101,9%-ով

   դ) սեփական եկամուտներ-100 %-ով

   ե) Տեղական տուրքեր-102 %-ով

2. 2019 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 11 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

3. Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:

4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները, որոնք մշտապես ապահովվելեն սննդով և ջեռուցմամբ:

Կատարվել է երեխաներին դպրոց ճանապարհելու և ամանորյա հանդես, հանձնվել են նվերներ մանկապարտեզի, նախակրթարանի և դպրոցի տարական դասարանի երեխաներին:

5. 2019 թվականի ընթացքում վթարվել են տարբեր փողոցների խմելու ջրագիծերը և կոյուղագծերը, որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:

6. Ժամանակին կատարվել է հացահատիկի բերքահավաքը և աշնանացանը:
7. Մայիսի 9-ին կազմակերպվել է Հայրենական մեծ պատերազմի և Լեռնային Ղարաբաղի պայքարի մասնակիցների մեծարման տոնահանդես և տրվել է նվերներ:
8. Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներն հատկացվել է 3.825.000 դրամի օգնություն:

9. Մասնակցել ենք դպրոցի վերջին զանգի արարողությանը:

10. Ամբողջ ուսումնական տարին հատկացվել է ուսանողական անվճար ավտոմեքենա ուսանողներին Երևան տանելու համար:
11. Բոլոր նորածին երեխաների ընտանիքներին տրվում է միանվագ գումար:
12. 2019 թվականի դրությամբ աշխատավարձի և սոց վճարների պարտքեր չկան:
13. Համայնքում անց է կացվել սուբվենցիայի ծրագրով նոր արդիական ցերեկային լուսավորություն:
14. Սկսվել է համայնքի միջոցներով նոր կառուցվող հանդիսությունների սրահի աշխատանքները որը կավարտենք գարնանը:
15. Աշխատանքներ են տարվում Համաշխարհային խորհրդի Հայաստանյան Կլոր սեղանի տնօրինության հետ մանկապարտեզի մասնակի վերանորոգման համար:
16. Մշակույթի տանը գործում է ժողովրդական պարերի փոքրերի և մեծերի խումբ, ինչպես նաև կարատեի խմբակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնանորոգման հարցը, որը հաստատվել է պետական ծրագրով և այս տարի նոր ջրագծեր կունենանք:
2. Առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի շենքի վերանորոգման հարցը:
3. Լուրջ խնդիր է գյուղի մայր կանալի հիմնանորոգման հարցը:
4. Մնացել է չլուծված բուժ. ամբուլատորիայի նոր շենքի կառուցման խնդիրը:
5. Առաջնահերթ խնդիր է համայնքի փողոցների ասֆալտապատման հարցը:

Ոսկեհատ համայնքի

Ղեկավար՝ Գ. Ներսիսյան